ԵՐԵՎԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Կ. Գ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Քիչ է գրվել Երևանի միջնադարյան հուշարձանների մասին։ Դրանք քիչ են ուսումնասիրվել, և շատերը մեղ ծանոթ են միայն մատենագրության մեջ պատահականորեն հիշատակված տարեթվերով։

Հրատարակվածների մեջ կան բազմաթիվ սխալներ. օրինակ, Ղ. Ալիշանն իր «Այրարատ» մեծածավալ աշխատության մեջ Հաղբատավանքի Անապատը ներկայացրել է իբրև «Անապատի եկեղեցի յԵրևան», Նախիջևան քաղաքի պարսկական դամբարանն իբրև «Աշտարակն Երևանայ» և այլն[1]։

Դեռ այսօր էլ մեր մամուլում սխալ տեղեկություններ են հրատարակվում և Երևանին չվերաբերող լուսանկարներ արտատպվում[2]։

Ցանկանում ենք համառոտակի ներկայացնել Երևանի միջնադարյան հուշարձանները, այն չափով, ինչ չափով այդ հնարավոր է ներկայումս, երբ դեռ շատ խնդիրներ վերջնականապես լուծված չեն։

*

Երևան քաղաքում անցյալի կանգուն հուշարձանները խիստ սակավաթիվ են, որովհետև, չնչին բացառությամբ, դրանք զոհ են գնացել 1679 թվականի երկրաշարժին, որ մեր պատմության մեջ հայտնի է Սեծ կամ Երևանա շարժ անունով։

Այն կործանիչ ուժ է ունեցել Երևանում և ընդարձակ տարածություններ է ընդգրկել նրա շրջապատում՝ սկսած Գեղարդա վանքից և Խոր Վիրապից մինչև Աշտարակի շրջանի Հովհաննավանքը, որտեղ այդ ժամանակ ուսուցիչ էր պատմադիր Զաքարիա Սարկավագ Քանաքեռցին։ Իր մասին նա գրել է. «Եւ մեք հապիւ զերծաք ի մահուանէ»։

Իր պատմության էջերում Զաքարիան մի ամբողջ գլուխ է նվիրել այդ երկրաշարժին և նրա պատճառած վնասներին, որ վերնագրված է. «Վասն ահագին շարժին Երևանայ»։ Այդտեղ նա գրում է.

«Ի թուին ՌՃԻԸ (1128+551=1679), Ի հունիս ամսոյ Դ (4, նոր տոմարով 14), Գ շաբթի (երեքշաբթի) աւուր յէ երորդի ժամուն (յօթներորդի ժամուն—մեր ժամանակով ցերեկվա ժամը 1-ին), յանկարծակի գոռաց երկիր որպէս ամպքն. յետ գոռալոյն ահագին թնդմամբ շարժեցաւ։ Երկիրն Արարատեան առհասարակ դողայր և երերիւր... և թէ հիմունք երկրի տատանէին։ Եւ ելեալ շարժս այս ի կողմանց Գառնոյ և փլան ամենայն շինուածք և գեղեցկայարկ բնակութիւնք, և վանօրայք և եկեղեցիք»։

---

1 «Այրարատ», Բնաշխարհ Հայաստանեայց, տեղագրեաց Հ. Ղ. Ալիշան, Վենետիկ, 1890, էջ 304 և 312։

2 «Երեկոյան Երևան», 14 հոկտեմբերի, 1968 թ., № 242, «Հայրենիքի ձայն», 27 նոյեմբերի, 1968 թ., № 48։

Այնուհետև, Զաքարիան թվարկում է տարբեր վայրերում կործանված հուշարձանները ու վանքերը և ավելացնում.

«Էհաս շարժն մինչ ի գիւղաքաղաքն Կարբի և Գ (3) արք մեռան։ Եւ ի սուրբ ուխտն Յովհանավանք փլան ամենայն գեղեցիկ ապարանքն, և եկեղեցիքն խախտեցան...»։

Ապա շարունակում է.

«Մեռեալքն յոլովք էին քան զկենդանիս։ Զի թէպէտ յամենայն տեղիս ոչ կարացի իմանալ զմեռեալսն, այլ ի հայրենի գիւղն իմ Քանաքեռ թուեցին զմեռեալսն ՌՄԻԸ (1228)։

Ոչ մնաց շուն, ոչ կատու և ոչ հաւ։

Եւ յամենայն օր գոռայր երկիրն, օր Դ, օր Դ, օր Ե (օրը երեք, օրը՝ չորս, օրը հինգ անգամ), և ապա գոչեր շարժն, բայց վնասն յառաջի օրն եղև»։ Երևանի մասին նա գրում է։

«Եւ բերդն Երևանայ ի հիմանց տապալեցաւ, մզկիթ և մինարայք։ Ի բազում տեղիս աղբիւր բղխեցին և բազում աղբիւրք խցան»[3]։

Խորտակվել են կամուրջները և փուլ են եկել որձաքար ժայռերը։

Երկրաշարժի ժամանակ Երևանում ևս շատ մարդ է զոհվել։ Բացի Զաքարիայից, այդ մասին են վկայում նաև Կոզեռնի գերեզմանոցի սակավաթիվ արձանագրած տապանաքարերը, որտեղ 1679 թվականին վախճանվածները մեծ թիվ են կազմում[4]։

Զաքարիա Սարկավագը Երևանում հիշատակել է երեք եկեղեցի, որոնք կործանվել են մեծ երկրաշարժի ժամանակ։ Դժբախտաբար, նա կարևոր չի համարել այդ երեք եկեղեցիների անունների հիշատակումը, կարծելով, որ դրանք բոլորին հայտնի են։

Սակայն, հարցն այն է, որ Երևանում երկրաշարժից առաջ ոչ թե երեք, այլ ավելի մեծ թվով եկեղեցիներ են եղել։ Մեզ հայտնի են՝ Պողոս-Պետրոսը, Կաթուղիկեն, Երկուերեսանի եկեղեցին, Զորագյուղի անապատը (ս. Սարգիս եկեղեցին, որ այժմ թեմական առաջնորդական եկեղեցի է), Կոնդի եկեղեցին, Զորավորը, Նորքի երկու եկեղեցիները (ս. Սիմեոն և ս. Աստվածածին), Գեթսեմանին և այլն։

Հասկանալի է, որ երկրաշարժից տուժել են բոլոր եկեղեցիները, բայց Զաքարիայի հիշատակած երեքը մեզ համար ունեն առանձնահատուկ կարևորություն, որովհետև դրանք եղել են գլխավորները, իսկ մյուսները՝ նա համարել է սովորական կամ երկրորդական։

Քանի որ Զաքարիան այդ երեք կարևոր տաճարների անունները չի հիշատակել, ստիպված ենք դիմել քննության և պարզել, թե վերևում թվածներից որոնք կարող են լինել այդ երեքը։

Եկեղեցիների ցանկից դուրս ենք հանելու ծխական փոքրիկ եկեղեցիները, այս կամ այն առթիվ կանգնեցրած մատուռները և այն տաճարները, որոնք մինչև երկրաշարժը քաղաքից դուրս են համարվել։ Դրանք են՝

ա. Գեթսեմանին, որը փոքրիկ մատուռ էր և գտնվում էր այժմյան պետական օպերայի տեղում։

---

3 Զաքարիա Սարկավագի Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, հ. Բ, էջ 104—105։

4 Երևանի վիմական արձանագրությունների մեր անտիպ՝ ժողովածուն, որ հավաքել ենք սկսած 1931 թվականից։

բ. Կոնդի ծխական եկեղեցին։

գ. Երկուերեսանին, որի տեղն անգամ հայտնի չէ և նրա գոյության մասին ժողովրդի հիշողության մեջ ոչինչ մնացած չի եղել մեզանից 50 տարի առաջ։ Մեր կարծիքով, Երկուերեսանին Զորագյուղի անապատի եկեղեցիներից մեկի ավելորդ անունն է եղել։

դ. Կաթուղիկեն. սա փոքրիկ եկեղեցիներից մեկն է, և, որ գլխավորն է, երկրաշարժից չի քանդվել։ Կաթուղիկեն Երևանի միակ եկեղեցին է, որ երկրաշարժին դիմացել է, հետևապես Զաքարիայի հիշատակած երեք քանդված եկեղեցիներից մեկը չէր կարող լինել։

ե. Նորի Երկու եկեղեցիներ. սրանք քաղաքի եկեղեցիներ չեն համարվել. որովհետև Նորք գյուղը քաղաքին է միացել 1837 թվականին։

Մենք այստեղ չհիշատակեցինք Ավանի նշանավոր տաճարը, Քանաքեռի ղույգ եկեղեցիները, ինչպես նաև Նորադավթի, Շենգավթի հնությունները, որոնք միայն վերջերս են քաղաքին միացել և երկրաշարժի ժամանակ Երևանի հետ ոչ մի առնչություն չունեին։

Այսպիսով, հանդում ենք այն եզրակացության, որ երկրաշարժից առաջ Երևանի երեք գլխավոր եկեղեցիները, որոնք նկատի է ունեցել Զաքարիա Սարկավագը, եղել են ա. Պողոս-Պետրոսը, բ. Զորագյուղի առաջնորդական եկեղեցին և գ. Զորավորը, որոնք գոյություն են ունեցել երկրաշարժից առաջ։ Այդ եկեղեցիներում գտնվում էին 70-ից ավելի հին հայերեն ձեռագիր գրքեր։

*

Այժմ համառոտակի բնութագրենք Երևանի միջնադարյան հուշարձանները, որոնցից մի քանիսն անցյալում թեև Երևանի հետ առնչություն չեն ունեցել, բայց քաղաքի մեծանալու հետևանքով, այժմ ընդգրկվել են նրա մեջ։

1. Պողոս-Պետրոս եկեղեցի, գտնվում էր այժմյան «Մոսկվա» կինոթատրոնի տեղում և համարվում էր կառուցված XVII դարի վերջերին։ Կառուցման ստույգ թվականը հայտնի չէր։ Միայն գիտեին, որ կառուցվել է 1679 թվականի մեծ երկրաշարժի ժամանակ կործանված նույնանուն տաճարի տեղում և իր պատերին ունի նորոգության երկու արձանագրություն. մեկը 1778 և մյուսը 1811 թվականների։

Տաճարի արտաքին տեսքն անհրապույր էր. պատերը շարված էին մաքուր տաշված տուֆ քարով, բայց ճարտարապետական որևէ գեղեցկություն չունեին։ Իրավացի է Երվանդ Շահազիզը, երբ խոսքն ընդհանրացնելով գրում է, որ «Երևանի եկեղեցիները դրսից գեղեցկության տեսակետից այնքան էլ հաճելի տպավորություն չեն թողնում սովորական դիտողի վրա»[5]։

Պողոս-Պետրոս եկեղեցին իր արտաքին տեսքով մի ընդարձակ դահլիճ էր, երկու ղույգ սյուներով, որոնք նրան երեք նավի էին բաժանում արևելքից դեպի արևմուտք ձգված։ Արևելյան ավագ խորանի հյուսիսային և հարավային կողքերին ուներ քառակուսի հատակաձևով երկու ավանդատներ։ Եկեղեցին փոսի մեջ էր և նրա թիթեղյա երկթեք տանիքը, որ XIX դարի կարկատան էր քարե սալածածկ տանիքի վրա, անշքացնում էր առանց այն էլ պարզունակ արտաքին տեսքը։

Բազիլիկ ոճի տաճարներ շատ են կառուցվել Հայաստանում, բայց բոլորն էլ IV—VI դարերում միայն։ Հետագայում այդպիսի տաճարներ չեն շինվել

5 Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, Երևան, 1931 թ., էջ 223։

մինչև XVII դարը, երբ ինչ որ չափով եռանավ բազիլիկ տաճարները հիշեցնող նորերը կառուցվեցին, բայց մեծ մասամբ հների հիմքերի և այլ մնացորդների վրա[1]։

Նկ. № 1. Պողոս-Պետրոս եկեղեցու ընդհանուր տեսքը հարավ-արևմտյան կողմից

Այդպես էլ եղել է այստեղ։ Պողոս-Պետրոս եկեղեցում հնից մասեր էին պահպանվել ավագ խորանի կողքերին և արևելյան ավանդատների մեջ (արևմտյան ավանդատներ չուներ)։

Նկ. № 2. Պողոս-Պետրոս եկեղեցին հարավ-արևելքից։ Կառուցված V դ., վերակառուցված XVII դարի վերջում

[1] Երվանդ Շահազիզը իր «Հին Երևանը» գրքի 224 էջում գրում է, որ Պողոս-Պետրոս եկեղեցու արևմտյան պատն ամբողջությամբ հին է, դա սխալ է. հնից մնացորդներ կային տաճարի միայն արևելյան մասում։

Եկեղեցու բեմի կողքերի առաջակարկառ մասերի երեսին ի հայտ եկան տարբեր ժամանակներում նկարված վեց շերտ նկարներ, որոնցից վերին երկուսը պաստառի վրա, իսկ ներքին չորսը որմերի սվաղի վրա։ Վերիններին XIX դարի էին, իսկ ներքևիններին՝ հին ժամանակների։ Ամենատակինը, ինչպես ենթադրում են արվեստի և նկարչության պատմաբանները, պատկանում էր VI դարին կամ VII-ի սկզբներին։ Մինչ այդ, եկեղեցու պատերը մերկ են եղել և սվաղ չեն ունեցել։ Ստորինը բուսական զարդագոտի է, իսկ մյուս շերտերինը՝ Պողոս և Պետրոս առաքյալների դիմանկարը, որոնց և, ինչպես հայտնի է, նվիրված է եղել եկեղեցին[7]։

Այդ որմնանկարներից մեկի վրայի Շ և Ձ գրերը (երրորդ շերտ) ոմանք թվական կարծեցին, որ ստացվում էր մեր 1131-ը (շձ=580+551=1131), այդ գրերին հաջորդող այլ գրեր էլ կային, որոնցից կազմում էին Իանէ անունը, բայց դա ակներև սխալ էր, որովհետև այդ նկարը արված էր յուղաներկով, որն այն ժամանակ դեռևս հայտնի չէր[8]։

Պողոս-Պետրոս եկեղեցու որմնանկարները խնամքով, շերտ առ շերտ հանվեցին այդ գործի լավագույն մասնագետների կողմից, Յուկինի ղեկավարությամբ և այժմ պահվում են Հայաստանի թանգարաններում (ստորինը՝ պետական պատկերասրահում, իսկ մյուս շերտերը՝ Հայաստանի պատմության թանգարանում)։

Դրանք հայկական որմնանկարչության մնացորդների մեջ ունեն իրենց պատվավոր տեղը, և Երևանի միջնադարյան պատմության համար բացառիկ արժեք են ներկայացնում։

Պողոս-Պետրոս եռանավ մեծ եկեղեցու գոյությունը ցույց է տալիս, որ Երևանը V—VI դդ. մեծ բնակավայր է եղել և, ըստ երևույթին, Պողոս-Պետրոս եկեղեցին այն ժամանակ քաղաքի միակ տաճարը չէր։ Եղել են նաև այլ նշանավոր եկեղեցիներ, որոնց մասին ունենք միայն անուղղակի տեղեկություններ։ Այսպես, օրինակ, 607 թվականին Նորընտիր Աբրահամ կաթողիկոսը Դվինում ժողով է հրավիրում Հայաստանի Բյուզանդիային անցած վայրերի հոգևորականների մասնակցությամբ, որտեղ ժողովականները որոշում են ընդունում հաստատուն մնալ հայկական դավանանքին և նզովում են բոլոր տեսակի հերձվածողներին։ Այդ ժողովին Երևանից, որ բյուզանդական մասի մեջ էր մտնում, մասնակցել են երկու վաներեց[9]։ Նշանակում է, այդ ժամանակ Երևանն ունեցել է առնվազն երկու խոշոր եկեղեցիներ, որոնցից մեկը Պողոս-Պետրոսն է եղել, իսկ մյուսը, հավանաբար, այժմ հետադարյան վերակառուցումներով մեզ ծանոթ եկեղեցիներից մեկը, բայց չգիտենք թե որը։

2. Կաթուղիկե եկեղեցին ևս քաղաքի «հին» թաղում էր գտնվում։ Այն ուներ մի մեծ ժողովրդանոց՝ երկթեք թիթեղյա ծածկով, որի գլխին նստած էր անհամաչափորեն փոքր մի զանգակատուն։

---

7 Л. А. Дурново, Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, стр. 8.

8 Երվանդ Շահազիզ, անդ, էջ 225։

9 «Զեռնարկ՝ զոր ետուն Աբրահամու հայոց կաթողիկոսի ի միաւորութեանն աշխարհիս հայոց, այնոքիկ որ էին ընդ իշխանութեամբ հոռոմոց ի թագաւորութեան Մաւրկան», Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 151։

Կաթուղիկեն շինված էր մաքուր տաշված տուֆ քարով, և զարմանալին այն էր, որ ավագ սեղանը տաճարի արևելյան ծայրին առանձին գմբեթ ուներ, որը կիսով չափ թաղված էր ժողովրդանոցի պատերի և ծածկի մասերի մեջ։

Տարօրինակ էր տաճարի արևելյան պատի արտաքին տեսքը. այն ուներ երեք սրածայր ճակտոն, որոնցից կենտրոնականը ավագ խորանին էր վերաբե-

Նկ. № 3. Կաթուղիկե եկեղեցու արևելյան պատը հետադարյան (XVII դ.) հավելվածների հետ միասին

ռում, իսկ երկու կողքինները՝ սեղանի աջ և ձախ կողմերի ավանդատներին։ Տարօրինակ էր նաև ավագ խորանի ներքին տեսքը։ Սա ոչ թե սովորական սեղանների նման երկարացրած թևերով կիսաբոլոր հատակաձև ուներ, այլ երկարավուն էր և ուներ բարդ՝ հետ ու առաջ ընկնող մասերով անսովոր ձև։

Վաղուց էին նկատել տաճարի այդ անսովոր ձևերը, բայց ոչ ոք խորամուխ չէր եղել հասկանալու համար, թե դրանք ինչից են առաջ եկել։

Հովհաննես Շահխաթունյանցը գրում է, որ Կաթուղիկեն մեկն է Երևանի հին թաղի (Շահարի) եկեղեցիներից «կառուցեալ ի վերայ չորից հիւսածոյ սեանց[10] օրոցաձև. ունի զմի և եթ սեղան յանուն սրբուհւոյ աստուածածնի, որոյ համարարարկն փոքր ինչ խորագոյն երկայնեալ ընդ արևելս, և քարակերտ կաթուղիկէ կրկին ի վերայ սեղանոյն և ի վերայ տանեաց նորին»[11]։

Հետագայում էլ եկեղեցու այդ անսովոր ձևերի վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձրել, չնայած այն բանին, որ եկեղեցին գտնվում էր քաղաքի կենտրոնում։

Երևանի վիմական արձանագրությունների ընդօրինակման ժամանակ, 1935 թվականին մենք նկատեցինք, որ այդտեղ մեծ եկեղեցու մեջ գոյություն ունի մի փոքրիկ հին եկեղեցի, որ շատ ավելի հին է, քան մեծը, և մեծի համար այն ծառայում է իբրև սեղան։

Հայտնի էր, որ Կաթուղիկե եկեղեցին կառուցվել է Երևանի մեծ երկրաշարժից հետո, բայց թե ո՞ր թվականին, հայտնի չէր։ Տաճարի արևմտյան ճակատին կար մարմարե մի խաչքար, պարզ հիշատակագրությամբ, որ փորագրված և սլատի մեջ էր հագցված 1693 թվականին։ Այդ թվականն էլ համարվում էր եկեղեցու վերաշինության տարին։ Մենք էլ այդ տեսակետին ենք, որովհետև Երևանի և նրա շրջապատի գրեթե բոլոր եկեղեցիները, մեծ երկրաշարժից հետո, վերաշինվել են 1693 կամ 1695 թվականներին[12]։

Շահխաթունյանցն էլ նույն կարծիքին է։ Նա գրել է, որ Կաթուղիկե եկեղեցին «Ունէր արձանագրութիւն շինութեանն որպես և միւս եկեղեցիք քաղաքիս, այլ դտանի ի ճակատ արևմտեան որմոյն արտաքուստ թուական հայոց ՌՃԽԲ (1693), ոչ միայն սա, այլև միւս եկեղեցիք և այլ շէնք մզկթաց և պանդոկաց և այլն, շինեցան զկնի մեծի երկրաշարժութեանն դիպելոյ յամի 1679, յորում միջոցի որ ինչ շինուածք էին յառաջնոց կործանեցան իսպառ»[13]։

1936—1937 թվականների ձմռան ամիսներին, մեր հսկողությամբ, Կաթուղիկե եկեղեցու XVII դարի վերջին կառուցված մեծ դահլիճը քանդվեց և նրա մեջ թաքնված փոքրագիր հին եկեղեցին ի հայտ եկավ իր ամբողջ վեհությամբ, ազատագրվելով բոլոր տեսակի հետագայան հավելվածներից, որոնց մեջ, ինչպես արդեն ասացինք, բոլորովին աննկատելի էր մնացել։

Այդ հնագույն փոքրիկ եկեղեցին վերանորոգված վիճակում (սրբատաշ քարերի վրայից հանված է սվաղը, նորոգված են գմբեթի վնասված մասերը, մաքրված են պատերը) գտնվում է Աբովյան փողոցի № 15 շենքի բակում։

XVII դարի վերջերին, մեծ դահլիճը շինելու ժամանակ, երբ ցանկացել են այդ հին տաճարն իբրև ավագ խորան ծառայեցնել նոր եկեղեցու համար, քանդել են նրա արևմտյան պատը, նոր կամար հագցրել նրա դլխին, և անհամաչափորեն լայնացրել են գմբեթի նեղ ու երկար պատուհանները՝ լույսը շատացնե-

---

10 Հյուսածո սյուն ասելով՝ Շահխաթունյանցը հասկանում է հաստահեղույս մույթ, որ բազմաթիվ քարերով է շարված։

11 Ստորագրութիւն Կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յ. Շահխաթունեանց, հատոր Բ, էջ 141։

12 Եկեղեցու քանդման ընթացքում ի հայտ եկան բազմաթիվ մանր հիշատակագրություններ և խաչքարերի բեկորներ, մեծ մասամբ 1694 թվականին պատկանող, այդ պատճառով, 1694-ն ենք համարել Կաթուղիկե եկեղեցու վերաշինման թվականը։ Տե՛ս «Տեղեկագիր պատմության և դրականության ինստիտուտի», 1938, № 1, էջ 192։

13 Շահխաթունյանց, անդ, էջ 141։

լու նկատառումով։ Նույնն են կատարել նաև արևելյան պատի մեջ բացված լուսամուտի հետ։

Հասկանալի է, որ այդ բոլորը խախտել է հուշարձանի ամբողջությունը և վնասել նրան։ Այդ ամենի հետևանքով վնասվել են նաև հուշարձանի վրայի վիմական արձանագրություններից մի քանիսը։

Նկ. № 4. Կաթուղիկեի նորահայտ եկեղեցին, կառուցված XIII դարում, հետագարյան (XVII դ. վերջ) հավելվածներից ազատվելու ընթացքում

Մինչ այդ տաճարի ի հայտ գալը, Երևանում հայտնի չէր կանգուն և ոչ մի շինություն, որ կառուցված լիներ մեծ երկրաշարժից առաջ, եթե չհաշվենք Նորքի փոքրիկ կամուրջը Գետառի ձորում, որը շինված էր 1664 թվականին, մեծ երկրաշարժից ընդամենը 15 տարի առաջ։ Այդ առումով Կաթուղիկե եկեղեցին բացառություն է կազմում և կանգուն է մնացել ոչ միայն իր ամրակուռ կառուցվածքի պատճառով, այլև այն բանի հետևանքով, որ երկրաշարժից առաջ, 1603 թվականին, Թեղագուլենց Խոճա Մարգարի որդի Գրիգորը Կաթուղիկեի համար մի ժամատուն է կառուցած եղել, որի պատերը կործանումից փրկել են եկեղեցին։

Սակայն, ինչպես վաղուց արդեն նկատել ենք, այդ փոքրիկ եկեղեցին հնում Կաթուղիկե անունը չէր կարող ունենալ. այդպես էին կոչվում կաթողիկոսանիստ մայր տաճարները, ինչպես Էջմիածնի, Դվինի, Անիի մայր եկեղեցիները, բայց ոչ երբեք մատուռանման փոքրիկ եկեղեցիները[14]։

Շահխաթունյանցը գրում է, որ Կաթուղիկե եկեղեցու ավագ սեղանը Աստվածածնի անվանն է նվիրված եղել։ Հավանաբար, դա էլ եղել է փոքրիկ եկեղեցու հին անունը, իսկ Կաթուղիկե կոչվել է սկսած XVI դարից, երբ կաթողիկոսը Երևան դալիս երբեմն իջևանում էր այնտեղ։

Այդ եկեղեցու Կաթուղիկե անվանը առաջին անգամ հանդիպում ենք նրա հյուսիսային պատի վրա փորագրված՝ 1598 թվականի նվիրատվական արձանագրության մեջ[15]։



Նկ. № 5. Կաթուղիկե եկեղեցու կորվածքը հետագարյան հավելվածների հետ միասին։ Ջափագրություն Տարագրոսի

Կաթուղիկե փոքրիկ եկեղեցին միջնադարյան հայ ճարտարապետության լավագույն նմուշներից մեկն է, որի ճարտարապետական հորինվածքը XIII դարում շատ էր տարածվել Արևելյան Հայաստանում։ Կառուցված է մեծ խնամքով և ճաշակով, իսկ պատերին փորագրված բազմաթիվ արձանագրությունները Երևանի պատմության համար ունեն բացառիկ կարևորություն։

Դրանցից կարևորագույնը 1264 թվականին գրված մեծ վաշխառու և կալվածատեր Պարոն Ավետյաց որդի Սահմադնի արձանագրությունն է՝ Երևան քաղաքն իր հողով ու ջրով գնելու, ինչպես նաև հողերի առ ու ծախքի վերաբերյալ նոր կարգեր սահմանելու մասին։

Սա ոչ միայն Երևանի, այլև միջնադարյան հայերեն վիմական մի քանի հազար արձանագրությունների մեջ բացառիկ է իր բովանդակությամբ և երկրի տնտեսական կյանքի ու ընկերային հարաբերությունների ուսումնասիրության համար ունի մեծ արժեք։

14 Նեռ առումով կաթուղիկե է կոչվում նաև եկեղեցու գմբեթը։

15 Կաթուղիկե եկեղեցու վերականգնման և նրա վիմական արձանագրությունների մասին տե՛ս Կ. Ղաֆադարյան, Երևանի կաթուղիկեի և Նորահայտ հուշարձանի վիմական արձանագրությունները, «Տեղեկագիր պատմության և գրականության ինստիտուտի», 1938, № 1, էջ 165—192։

Նվազ կարևորություն չունի նաև Գեշմարդի 1301 թվականի արձանագրությունը, որով նա իր երկու կուղպակներն է նվիրել Երևանի սրբատեղիներին իրենց ներքնատներով և խղիրով:

Երևանը միջնադարյան արձանագրությունների մեջ հաճախ հիշատակվում է իր այգիներով, և այն տպավորությունն է ստեղծվել, թե նա միայն այգիներով հայտնի գյուղական տիպի մի բնակավայր է եղել:

Գեշմարդի արձանագրությունից իմանում ենք, որ Երևանն ունեցել է ներքնատներով և պահեստներով օժտված կուղպակներ (խանութներ), որոնք այնքան մեծ են եղել, որ երկուսի դիմաց նվիրատուն յոթը պատարագ է ստացել, ամեն տարի:

Այս արձանագրությունը ապացույց է այն բանի, որ Երևանն իր հռչակավոր խաղողի այգիների կողքին, վաճառաշահ քաղաք է եղել դեռևս XII դարի վերջերից մինչև XVI դ. սկզբները:

3. Զորագյուղի անապատը հնում եղել է Երևանի թեմական առաջնորդարանի կենտրոնը և կապված է եղել եպիսկոպոսական աթոռի հետ: Նախքան մեծ երկրաշարժը իր պարսպի ներսում ունեցել է բազմաթիվ շենքեր: Այժմ այնտեղ մնացել է միայն ս. Սարգիս զորավար եկեղեցին, որ հիմնադրվել է նույնանուն հին եկեղեցու փոխարեն, 1835 թվականին: Շահխաթունյանցը գրում է, որ այդ անապատում ժողովրդի համար շինված եկեղեցին ս. Սարգիսն է եղել՝ կառուցված Նահապետ կաթողիկոսի հրամանով, բայց «յաղագս կարի հնութեանն վտանգաւոր գոլոյն աղօթաւորացն ի նմա ժողովրդոց, ըստ խարխուլ շինուածոյն, յամի 1835, ի ժամանակի պաշտաման մերում հոգևոր այցելութեամբ, տուաք քակել զայն բոլորովին ի հիմանց, հրամանաւ վեհափառ կաթողիկոսին, և նոր ի նորոյ, ի նոյն տեղւոջ ընդարձակ ևս հիմնադրութեամբ, տուաք կառուցանել զորմունսն, որոյ շենք հանդերձ չորս սեամբքն ի տաշածոյ և ի հասարակ քարանց և ի կրոյ հասանի գրեա թե ի կատար յայս ամ»[16]:

Այս անապատն, ըստ Շահխաթունյանցի, եղել է նաև կաթողիկոսների իջևանը: Նրանք այդ վանքում ունեցել են հատուկ բաժանմունք իր առանձին եկեղեցիով (ս. Գեորգ): Շահխաթունյանցը գրում է, որ Զորագյուղի անապատը, «որ է իջևան կաթուղիկոսաց աթոռոյ էջմիածնի, և տեղին բովանդակ սեպհականութիւն նոյն կաթողիկոսական աթոռոյն էջմիածնի»[17]:

Առաքել Դավրիժեցին գրում է, որ XVII դարում մինչև Մովսես Տաթևացու ձեռնարկած շինարարական մեծ աշխատանքները, էջմիածնի վանքը դրեթե ավերակ էր և անմարդաբնակ— «վասն զի կաթուղիկոսունքն անդ էջմիածին ոչ բնակէին, այլ յԵրևան քաղաք ի կաթուղիկէ եկեղեցւոջն և կամ թե ի շրջագայութեան»[18]:

Շահխաթունյանցը գրում է, որ Զորագյուղի անապատը չորս մասերից էր կազմված, որոնցից առաջինը կաթողիկոսարանի մասն է եղել իր առանձին

---

16 Ս. Սարգսի կառուցումը ամենայն հավանականությամբ ավարտվել է 1842 թվականին, որովհետև Շահխաթունյանցի գիրքը տպագրվել է այդ նույն թվականին:

17 Յովհաննես Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի..., հատոր Բ, էջ 146—147:

18 Առաքել Դաւրիժեցի, էջ 231: Այս տեղեկությունից երևում է, որ կաթողիկոսները բացի իրենց պաշտոնական իջևանից, երբեմն էլ Կաթուղիկե եկեղեցում են իջևանել: Երևի այդ պատճառով էլ այդ փոքրիկ եկեղեցին Կաթուղիկե անունն է ձեռք բերել:

պարսպով և գտնվել է Հրազդանի դառիթափի գլխին։ Նրանից դեպի հյուսիս, դարձյալ քարափի գլխին, եղել է ս. Հակոբ եկեղեցին, «Յակոբայ հայրապետի (Շամախեցի, 1759—1763) կառուցեալ ի վերայ չորից սեանց, որմունքն ի հասարակ քարանց և ի հողոյ, իսկ սիւնքն և կամարքն հանդերձ առաստաղօք ի թրծեալ աղիւսոյ»։ Այնուհետև ավելացնում է, որ «այժմ հայազգի բնակիչք այսր Զորագեղջ աստ աղօթեն»։ Շահխաթունյանցը ավելացնում է նաև, որ այստեղ եղել են «բաղում սննեակք և փուռն հացի», որոնք նա ավերակ վիճակում է տեսել։ Անապատի երրորդ մասը, արևելյան կողմում, եղել է. «ծառատունկ և պարտէզ բանջարոյ», իսկ չորրորդը՝ ժողովրդին սպասարկող՝ ս. Սարգիս եկեղեցին, ինչպես ասացինք, կառուցված 1835 թվականին։



Նկ. № 6. Զորավոր եկեղեցու արևելյան պատի վերին մասի զարդախաչը և պատի մեջ հազցրած խաչքարերը (1693)

Զորագյուղի մեծ անապատից միայն այդ ս. Սարգիս եկեղեցին է, որ գոյատևել է մինչև մեր օրերը, իսկ մնացած բոլորն ավերվել կամ հրդեհվել են փայտակերտ և հողակերտ լինելու պատճառով։ Ս. Սարգիսն այժմ էլ Երևանի եկեղեցական թեմի առաջնորդական եկեղեցին է։

4. Զորավոր եկեղեցին հնում մի փոքրիկ մատուռ է եղել «ի վերայ դամբարանին սրբոյ առաքելոյն Անանիայի, որ էր ի հիւսիսային կողմանէ քաղաքին Երևանայ ի մեջ այգեստանեացն, և էր աւերակ և անմարդաբնակ»[19]։

Տաթևացի Մովսես վարդապետը (հետագայում կաթողիկոս՝ 1629—1632 թթ.) ընդհանուր լեղու գտնելով Երևանի պարսիկ Ամիրգունա խանի հետ, շինարարական մեծ աշխատանքներ է կատարում այնտեղ։ Նա «արդեամբք և ձեռնտուութեամբ քրիստոնէից տեղականաց և վաճառականաց, որք յօժարութեամբ տային տուրս ողորմութեան ի շինումն տեղւոյն, վասն սիրոյն վարդապետին, զի բնակեսցէ ի մեջ իւրեանց», շինում է ժամատուն, միաբանների

19 Շահխաթունեանց, հ. Բ, էջ 147—148։

համար խցեր, առաջնորդարան (սարավութ) «և զայլ տունս յոլովս և կատարեալ զամենայն շինուածոն, բնակեցաւ անդէն վարդապետն իւրովք միաբանօքն կարգաւն և սահմանաւն. այն, զոր կարգեցին ի մեծ անապատն»։

Մովսես Սյունեցին այդ փոքրիկ մատուռը վանքի է վերածում, ամբողջը պարսպով փակում, միայնակյաց միաբանություն հավաքում «և գրոց աշխատերտք իմաստունք», և այնպիսի ծաղկուն վիճակի հասցնում, որ այդ վանքի համբավը, Դավրիժեցու ասելով, «հռչակեցաւ ընդ ծագս աշխարհի»[20]։

1679 թվականի մեծ երկրաշարժին զոհ գնաց ամեն ինչ, որից հետո, 1693 թվականին կառուցվեց այժմ գոյություն ունեցող եկեղեցին Խոնա Փանոսի նվիրատվությամբ[21]։ Այդ եկեղեցին կառուցված է բոլորովին նոր հիմքերի վրա և հնի հետ (ս. Անանիայի մատուռի) կապված չէ։ Նա XVII դարի վերջին տասնամյակի տիպիկ հուշարձան է՝ Շողակաթի, Մուղնու և նույն ժամանակներին պատկանող այլ հուշարձանների կողքին։ Այս եկեղեցու բուն անունը, ինչպես այդ գիտենք արձանագրություններից և մատենագրական աղբյուրներից, ս. Աստվածածին է, իսկ Զորավոր անունը նա ստացել է հետագայում, այնտեղ պահվող մի ձեռագիր մատյանի անունից, որ հրաշագործ և զորավոր է հռչակվել։

Այստեղ վանական կյանքը տևել է մինչև 1835 թվականը, որից հետո դարձել է ծխական եկեղեցի Մարաղայից գաղթած հայերի համար։

Այժմ Անանիայի մատուռն էլ չկա։ Նրա դամբարանը համարվող գեղանափոր կառուցվածքի գլխին, 1890 թվականին, կառուցել են գմբեթաձև մի փոքրիկ շինություն, եկեղեցուց անկախ։

Եկեղեցին ունի նախադավիթ և զանգակատուն, բոլորն էլ սրբատաշ քարից, բայց պարզ ու անզարդ, եթե հաշվի չառնենք արևելյան պատի մեջ հագցրած մի քանի զարդարուն քարերը։

5. Կոզեռնի գերեզմանատունը, որ գտնվում էր Կոնդի հյուսիս-արևելյան ծայրին, այժմ գոյություն չունի։ Երևանի մեծանալու պատճառով այդ գերեզմանոցը դարձավ քաղաքի կենտրոնական թաղերից մեկը, իսկ այնտեղի գերեզմանները տեղափոխվեցին նոր գերեզմանոցները։

Այդ գերեզմանոցը, այնտեղ թաղված XI դարի նշանավոր հայ տոմարագետ և մաթեմատիկոս Հովհաննես Կոզեռնի անունով, կոչվում է, Կոզեռնի գերեզմանոց[22]։

Այս գերեզմանոցը Երևանի միջնադարյան հուշարձանների մեջ բռնում է կարևոր տեղ։ Նրա հնագույն մասը եղել է ավելի հյուսիսային կողմում, բայց այնտեղ շատ վաղուց, հավանաբար XIII—XIV դարերում, հողին են հավասարեցրել գերեզմանները և տեղում ծառեր ու խաղողի այգիներ տնկել։ Այդտեղ, վերջին տասնամյակներում, շենքեր կառուցելու միջոցին, ի հայտ եկավ մի այլ

---

20 Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ, էջ 225։

21 Մովսեսի շինած շենքերը այրվել ու ավերվել են 1635—1636 թթ. թուրք-պարսկական կռիվների ժամանակ, որից հետո Մովսեսի հաջորդ Փիլիպպոս կաթողիկոսը նորոգել է և վերաշինել մի շարք շենքեր (գմբեթավոր ժամատուն, խցեր, սեղանատուն և այլն), որոնք, ինչպես ասացինք, զոհ գնացին 1679 թ. մեծ երկրաշարժին։

22 Կոզեռնի գերեզմանոցը կառուցապատվելուց առաջ Հուշարձանների պահպանության բաժնի հանձնարարությամբ արտագրել եմ գերեզմանոցի բոլոր տապանագրերը հնագույնից սկսած մինչև 1800 թվականը ներառյալ, որոնց թիվը հասել է 169-ի։ Մինչև այժմ դրանցից միայն 2-ն են տպագրված։

գերեզմանոց՝ նեղ ու երկայն քարարկղյա դամբարաններով, որոնք պատկանում էին քրիստոնեության վաղ ժամանակներին՝ V—VII-րդ դարերին։

Կողեոնը, որ ըստ պատմագիր Մատթեոս Ուռհայեցու ապրել է Խաչիկ Բ. Անեցու կաթողիկոսության օրերին (1058—1065), գիտնականի մեծ համբավ է ունեցել, և նրա գրչին պատկանող մի հետաքրքիր երկասիրություն, որ տումարակն արվեստի, թվականների մասին է, անտիպ վիճակում հասել է մեզ։ Ըստ Արիստակես Լաստիվերտցու, Կողեոնը գրել է նաև «Հավատո գիր», որ մինչև օրս անհայտ է մնում։ Նա ասում է. «և Յովհաննէս ի նոյն գաւառէ (Տարօն), զոր վերագիր անուամբ Կողեոն կոչէին, որ զՀաւատոյ գիրսն գրեաց»[22]։

Նկ. № 7. Կողեոնի տապանատունը (XI դ.) 1679 թվականի մեծ երկրաշարժից հետո՝ վերակառուցված վիճակում

Կողեոնի գերեզմանի վրա շինված էր մի մատուռ, հավանաբար, մեծ երկրաշարժից հետո, բայց վրան ոչ մի արձանագրություն չկար, բացի 1829 թվականի նորոգման արձանագրությունից, Մելիք-Սահակ Աղամալյանի ձեռքով։ Նա այդ մատուռը նորոգել և վեր էր ածել տոհմական տապանատան։

Թեև Առաքել պատմագիրն, իբրև ժամանակակից անձնավորություն, վկայում է, որ իր ժամանակ Կողեոնի բլուրը հասարակական գերեզմանոց է եղել և Մովսես Սյունեցու դիակը «տարեալ ի հասարակաց գերեզմանատունն ի Կողեոն կոչեցեալ բլուրն, վասն զերեզմանի Կողեոն վարդապետին՝ որ անդ է, և յարահուսյ գերեզմանի Կողեռան վարդապետի և Մելիքսեթ վարդապետին (Վժանեցին), ի մեջ երկուցս այսոցիկ պատրաստեցին զդիր հանգստեան սրբոյն այսորիկ»[23]։

Սակայն զարմանալիորեն Կողեոնում հին տապանագրեր չկան, և ամենահին պատկանում է Մովսես Սյունեցուն—1633 թվականին, որից հետո մի ան-

22ա Պատմութիւն Արիստակեայ վարդ. Լաստիվերտցւոյ, Թիֆլիս, 1912, էջ 8։

23 Առաքել Դավրիժեցի, էջ 210։

գամից շատանում է դրանց թիվը։ Օրինակ՝ 1633-ից մինչև 1650 թ. կա 17 արձանագրած և թվական ունեցող տապանաքարեր։

Արվեստի տեսակետից Կոզեռնի տապանաքարերը որևէ բանով աչքի չէին ընկնում, հակառակ լեռնային շրջանների կենցաղային պատկերներով հարուստ տապանաքարերի, որոնց մասին կարելի է ասել, որ ժողովրդական բուն արվեստը XVII դարում վերելք է ապրել Գուգարքում, Սևանա լճի ափերին, Իջևանում, Շամշադինում և այլ լեռնային վայրերում։ Երևանի այս գերեզմանոցը, ինչպես՝ ասացինք, այդպիսի տապանաքարեր և խաչքարեր բոլորովին չուներ։

Նկ. № 8. Դեթսեմանի մատուռը հյուսիս-արևելքից։ Արևելյան կեսը XIII դ., իսկ արևմտյանը և ծածկը վերակառուցված 1679 թվականի մեծ երկրաշարժից հետո

6. Կոնդի ս. Հովհաննես եկեղեցու մասին շատ բան չունենք ասելու։ Հին տաճարը, որի ձևի և կառուցման ժամանակի մասին ոչինչ չգիտենք, 1679 թ. մեծ երկրաշարժի ժամանակ կործանվել է, և հայոց ՌՃՍԹ (1159—551=1710) թվականին նրա ավերակների վրա կառուցվել է այժմ գոյություն ունեցողը, որն իր ճարտարապետությամբ, մանավանդ արտաքին տեսքով, ոչնչով աչքի չի ընկնում։ Պարզունակ եկեղեցի է երկթեք տանիքով, մասամբ սրբատաշ, բայց, մեծ մասամբ, քիրղ քարերով շինված։ Ներկա շենքը կառուցել են Մելիք-Աղամալյանները։

7. Գեթսեմանի մատուռը գտնվում էր պետական օպերայի տեղում և քանդվեց այդ թատրոնի շինության պատճառով՝ ներկա դարի 20-ական թվականներին։

Երկթեք տանիքով թաղակապ փոքրիկ շենք էր, որի արևմտյան պատի գլխին, տանիքի վրա կար մի փոքրիկ զանգակատուն։ Վերջին անգամ վերանորոգված և ծածկը թիթեղապատված էր 1901 թվականին։ Հնից պահպանվել էր

արևելյան պատն իր երկու խորշերով և երեք միատող հիշատակագրություններով՝ պատին բանգակված խաչերի միջև գրված։

Արևելյան պատի վրայի հին մնացորդներից երևում է, որ Գեթսեմանի մատուռը սկզբնապես կառուցված է եղել XIII դարում։

8. Հրազդանի կամուրջը (հաղթանակի կամուրջից քիչ ներքև) այսօր պահպանվում է գրեթե իբրև հուշարձան, նրա վրայով այժմ անցնում են միայն մոտակա այգիները դնացողները։ Հին Երևան քաղաքը Հրազդան գետի վրա ուներ միայն այդ կամուրջը, որը կապում էր նրան Արագածոտնի, Էջմիածնի և ավելի հեռավոր վայրերի հետ։ Այն կառուցվել է 1679 թվականին, մեծ երկրաշարժից



Նկ. № 9. Երևանի հին կամուրջը Հրազդան գետի վրա։ Հնագույն կամուրջի տեղում կառուցված 1679 թվականին և վերին մասերը վերափոխած ու կենտրոնական ուռուցիկ մասը հարթեցրած 1830 թվականին

ոնմիջապես հետո, մեծահարուստ վաճառական Խոճա Փիլավի ծախսով, այդ պատճառով էլ կամուրջն անցյալում կոչվել է Խոճա Փիլավի կամուրջ, կամ, կարմրավուն քարով շինված լինելու պատճառով, երբեմ՝ Կարմիր կամուրջ։

Կամուրջն ունի կամարավոր չորս բացվածք, որոնցից երկուսը մեծ են, որոնց տակով գետն է հոսում։ Նրանց բացվածքի տրամագիծը 14,0 և 14,1 մետր է, իսկ երկու ծայրերի բացվածքները փոքր են, ունեն 3,0 և 3,4 մետր բացվածք։ Սրանց միջով մերձակա տարածությունները ոռոգող ջրանցքներ են անցնում պետի երկու ափերի ուղղությամբ։

Կամուրջի երկարությունը 87,5 մետր է, լայնքը, երկու կողմի բաղրիկների միջև ընկած օգտագործելի տարածությունը՝ 6,47 մետր է, նեղ է այսօրվա հասկացողությամբ այն պատճառով, որ հաշված է եղել միայն սայլերի, գրաստների և հետիոտն մարդկանց երթևեկության համար[24]։

[24] О. Х. Халпахчьян, Инженерные сооружения Армении, «Архитектурное наследство», № 17, Москва, 1964, стр. 87.

Այս կամուրջը 1830 թվականին վերանորոգվել և որոշ փոփոխության է ենթարկվել ռուսական պետության միջոցներով։

1679 թվականին շինած կամուրջի խելերը ցածրադիր են եղել, իսկ կենտրոնը բարձր՝ սապատավոր։ Նորոգության ժամանակ խելերը և ճանապարհը բարձրացրել են, կամուրջի սապատը հանել և հավասարեցրել են խելերին։

Հին Հայաստանը ունեցել է բազմաթիվ կամուրջներ Եփրատ, Տիգրիս և այլ գետերի վրա։ Դրանցից շատերը եղել են երկար և բազմաթռիչք (Քեփրի քեոյ)։ Բագրատունիների օրոք Հայաստանում կառուցվել են մինչև 34 մետր բացվածք ունեցող միակամար կամուրջներ Անիում, բայց Երևանի կամուրջը Աշտարակի հին կամուրջի, ինչպես նաև Օշականի և մի քանի այլ տեղերի կամուրջների հետ միասին բնորոշ օրինակներ են XVII դարի և հետագայի համար, որոնք կառուցվել են Հայաստանի առևտրական ճանապարհների վրա։

9. Երևանի բերդերը մի քանիսն են եղել։ Ամեն մի դարաշրջան ունեցել է իր պահանջներին համապատասխանող ամրոց։ Համենայն դեպս, մենք ծանոթ ենք Երևանում երեք տարբեր դարաշրջանների բերդերին։ Մեկն էրեբունի ամրոցն է, երկրորդը՝ Երևանի վաղ միջնադարյան անառիկ բերդը և երրորդը՝ Սարդարի բերդը, որի մնացորդները դեռ պահպանվել էին XX դարի սկզբներին։

Երևան քաղաքի պատմության համար մեծ կարևորություն է ունեցել նրա վաղ միջնադարյան բերդը, որ մատենագրության մեջ առաջին անգամ հիշատակվել է արաբների երրորդ արշավանքի ժամանակ, 650 թվականին[25]։

Սեբեոսը գրում է, որ Իսմայելի զորքերը «եկին ժողովեցան ի յԵրևան և մարտեան ընդ բերդին և ոչ կարացին առնուլ»[26]։

Նույն դեպքերը հիշատակում է նաև X դարի մատենագիր Դրասխանակերտցին[27]։

Բերդի տեղն այժմ անհայտ է, բայց մենք, նկատի ունենալով հին Երևանի թաղերը և քաղաքի վաղ միջնադարյան դիրքը, կարծում ենք, որ այն կառուցված պետք է լիներ Կոնդում, այն ժամանակվա քաղաքի կողքին, որ գտնվում էր Պողոս-Պետրոս եկեղեցու (կինո «Մոսկվա»), Կաթուղիկե եկեղեցու (Աբովյան փող. № 15) և Կոնդի ստորոտում։ Այդ միջավայրում բերդի հարմար միակ վայրը Կոնդն էր իր իշխող դիրքով և ջրին մոտիկ լինելու հանգամանքով։ Հետագա դարերում Կոնդը լցվել է հայ դաղթականներով և դարձել քաղաքի թաղերից մեկը։

Հին հայոց բերդը սարդարների բերդի տեղում չէր կարող լինել՝ վերջինիս քաղաքից հեռու լինելու պատճառով։ Առաքել Դավրիժեցին հաղորդում է, որ «Թուին ՌԼԲ (1032—552=1583) Երևան բերդ շինեցաւ» և նրա կառուցողը եղել է թուրք Ֆահրադ փաշան[28]։

---

25 Արաբների այս արշավանքի թվականը մանրամասն քննության առարկա է դարձրել ակադ. Հ. Մանանդյանն իր «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» աշխատության Բ հատորի երկրորդ մասում (Երևան, 1960 թ.), էջ 191—201։

26 Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Թիֆլիս, 1912, էջ 188։

27 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 92։

28 Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, էջ 488։

Երվանդ Շահազիզի դրքում քաղվածք է մեջբերված 1587 թվականին Նորքում գրված մի ձեռագրի հիշատակարանից, որի մեջ այդ բերդը կոչվել է Նորուհիմն։ Սա մի կողմնակի վկայություն է այն մասին, որ հին հայկական բերդն այդտեղ չի եղել[29]։

Ներկա դարի երեսնական թվականներին և հետագա տարիներին անընդհատ հետեել ենք սարդարի բերդի բռնած տարածության մեջ կատարված հողային բոլոր տեսակի աշխատանքներին և կատարել ստուգողական պեղումներ, բայց հին բերդի ոչ մի հետք չենք կարողացել գտնել։

Եթե հայոց հին ամրոցն այդտեղ լիներ, նրա մնացորդներն անպայման ի հայտ կգային այս կամ այն կետում։

10. Սարդարի բերդը, ինչպես ասացինք, առաջին անգամ կառուցել է Ֆահրադ փաշան, որը հիմնովին կործանվել է մեծ շարժի ժամանակ։ «Եւ բերդն Երևանայ ի հիմանց տապալեցաւ»—ասում է Զաքարիան, բայց, նրա ասելով, անմիջապես վերաշինում են մերձակա պարսկական խանությունների օգնությամբ, «երեքորմեայ ամրագոյն քան զառաջինն»[30]։

Այս բերդը Հրազդանի բարձրադիր դետափին, գրավում էր մոտ 18 հեկտար տարածություն։ Նրա պատերն ու ահարկու հողե աշտարակները դրված էին քարե հիմքերի վրա։ Ներսում եղել են Սարդարի ապարանքը, հարեմը, երկու մզկիթ (մեկը՝ հասարակաց, մյուսը՝ Սարդարի համար), զորանոց և այլ շինություններ։ Բերդն ուներ Հրազդանի ձորն իջնող աղյուսաշեն մեծ գետնուղի, որ բերդի մոտ ճյուղավորված էր երկու մասի. մեկի մուտքը գտնվում էր բերդի աղատ տարածության մեջ, իսկ մյուսինը՝ Սարդարի պալատում։

Ռուսների գրավումից հետո, 1827 թվականին, բերդը և նրա միջի շենքերը հետզհետե քայքայվեցին և ոչնչացան։

Ստար բռնակալների կառուցած այդ բերդը Երևանի ժողովուրդը չի սիրել։ Իրար հաջորդող թուրք և պարսիկ բռնակալներից, որոնց որջն էր այդ բերդը, նա միայն չարիք էր տեսել և չէր կարող իր բերդը համարել։

11. Նորքի կամուրջը սրբատաշ տուֆ քարով կառուցած միաթռիչք կամարով փոքրիկ կամուրջ է Նորքի ձորում, Գետառի վրա։ Կամարի թռիչքի երկարությունը 6,9 մետր է։ Կառուցված է երկրաշարժից առաջ, 1664 թվականին, Նորքեցի Հովհաննես վարդապետի միջոցներով։ Կառուցող վարպետն է, ինչպես այդ երևում է եղծված արձանագրությունից, Գրիգորի որդի Կիրակոսը։

Ավանդություն կա այն մասին, որ այդ կամուրջի վարպետը այդպիսի յոթը կամուրջներ է շինել։

Այժմ չի օգտագործվում և պահպանվում է իբրև հուշարձան։

Առաջներում կամուրջի վրայով կարավաններն անցել գնացել են դեպի հյուսիս՝ Սևանի ափերը, Աղստև, Թիֆլիս և ավելի հեռուները։

Կամուրջը կառուցել տվող Հովհաննես վարդապետի փակագիր արձանագրությունը պահվում է պատմության թանգարանում, իսկ կառուցման ընդարձակ արձանագրությունը փորագրված է կամուրջի կամարի վրա։

12. Գեոյ մզկիթը Երևանի ամենանշանավոր մզկիթն է։ Կառուցված Հուսեին Ալի խանի հրամանով, հիջրեի 1179 և մեր տոմարի 1765/6 թվականին։

---

29 Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, էջ 178։

30 Զաքարիա Սարկաւագ, էջ 104 և 105։

Ունի ընդարձակ ծառատունկ բակ, ջրավազան և շրջափակի մեջ առած խցեր և դպրոցական շենք (մեդրեսե)։ Այս մզկիթն այժմ վեր է ածված թանգարանի։ Երևանն ունեցել է և այժմ էլ ունի ուրիշ մզկիթներ[31]։

Նկ. № 10. Նորքի կամուրջը՝ կառուցված 1664 թվականին

13. Նորքի եկեղեցիները երկուսն են եղել, մեկը Սիմեոն Ծերունի, մյուսը՝ Աստվածածին։ 1679 թ. երկրաշարժի ժամանակ երկուսն էլ ավերվել են, իսկ հետագայում բոլորովին քանդվել։ Այժմ Աստվածածնա տեղում կան պատերի մնացորդներ և խաչքարերի բեկորներ։

Նորքը Երևանին է միացել 1837 թվականին, իսկ մինչ այդ համարվել է առանձին գյուղ։

14. Քանաքեռի եկեղեցիները ևս երկուսն են, երկուսն էլ հիմնովին վերակառուցած մեծ երկրաշարժից հետո, 1695 թվականին, սրբատաշ տուֆ քարով։ Թեև այդ երկու տաճարների վերակառուցումը եղել է նոր հիմքերի վրա, բայց նրանց մեջ, անշուշտ, պահպանվել են հնի մնացորդներ, մանավանդ նրանց արևելյան մասերում։

Եկեղեցիներից մեկը, որ մեծն է, նվիրված է Մծբնա Հակոբ Հայրապետին։ Ունի օրոցաձև ծածկ, նախագավիթ և ավագ սեղանի կողքերին երկու ավանդատներ։ Մասնակի նորոգության է ենթարկվել 1793 թվականին։

Մյուս, համեմատաբար փոքր եկեղեցին, որ Աստվածածնա անվանն է նվիրվել, հնում վանք է եղել և ունեցել է միաբանություն։ Առաջներում ունեցել է շրջապարիսպ, խուցեր և այլ շենքեր։ Զաքարիա Քանաքեռցին խոսելով Մեխյուի շարժումների մասին, Քանաքեռում հիշատակում է եպիսկոպոսի և վանականների անուններ։

31 Երվանդ Շահազիզը հիջրեի 1179 թվականը մեր տոմարին փոխադրելու ժամանակ փոքրիկ անճշտություն է թույլ տվել՝ փոխանակ 1765/6-ի ստացել է 1760 թվականը։

15. Քանաքեռի խաչարձանը կանգնեցված է հայոց ՉԺԴ և մեր 1265 թվականին գյուղի մեջ, ղլխավոր փողոցի կողքին։ Սա պատվանդանի վրա քարե շրջանակի մեջ հագցրած չքնաղ փորագրությամբ մի խաչքար է և ունի ընդարձակ արձանագրություն, որից իմանում ենք նաև խաչքարի գծագրող Մխիթարիչի անունը։

Նկ. № 11. Ավանի հռիփսիմեատիպ տաճարի արևմտյան պատը (VI դ.)

Այս խաչքարը երկրաշարժի ժամանակ կանգուն մնացած (գուցե և նորից իր տեղը կանգնեցրած) սակավաթիվ հուշարձանների թվին է պատկանում և կարող է փորագրական արվեստի լավագույն նմուշներից մեկը համարվել։

16. Ավանի տաճարը կառուցված է VI դարում, 591 թվականից առաջ։ Այդ տաճարով հայկական ճարտարապետության մեջ հիմք դրվեց տաճարական մի նոր տիպի, որն արագ թափով տարածվեց Հայաստանում (Ադիաման, Արամուս, Սիսավան, Թարգմանչաց տաճարը Այգեշատ գյուղում), թափանցեց Վրաստան (Մցխետի ս. Խաչ, Աթենի Սիոն) և կատարելություններ հասավ Հռիփսիմեի տաճարի հորինվածքի մեջ։

Ավանի տաճարը 591-ից մինչև 607 թվականը եղել է հայաթոռ կաթողիկոսության կենտրոն. ունեցել է կաթողիկոսարան, միաբանից խցեր և այլ շենքեր, որոնց ավերակները հետզհետե պեղվում են եկեղեցու շրջապատում։

Տաճարն ավերվել է 1679 թվականի մեծ երկրաշարժի ժամանակ. ծածկը փուլ է եկել և որմերը խարխլվել։

Այժմ պատերի խարխլված մասերը վերաշարված են և շրջապատը բարեկարգված[32]։

---

32 Կարո Ղաֆադարյան, Պատմա-հնագիտական դիտողություններ Ավանի տաճարի վերաբերյալ, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, էջ 76—90։

Տաճարի պատերին կան բազմաթիվ արձանագրություններ, որոնցից մեկը երկլեզվյան է և ծածկագիր, գրված 630-ական թվականներին[33].

17. Ավանում կան ևս երկու փոքրադիր եկեղեցիներ՝ կառուցված X—XIII դարերում։ Դրանցից մեկը, որ, ըստ արձանագրության, ս. Հովհաննեսն է, մոտը ունի մի մահարձան VI—VII դարերի և մի քանի տապանաքարեր։

18. Ավանի գերեզմանոցում կան մի քանի հին խաչքարեր և մի գերեզմանական կոթող, որ պատկանում է VI—VII դարերին։

Այսպիսով եզրակացնում ենք.

1. Երևանն ունեցել է վաղ միջնադարին և ավելի ուշ ժամանակներին պատկանող բազմաթիվ հուշարձաններ՝ Պողոս-Պետրոս եկեղեցի (IV—V դ.), հին հայկական բերդը, որ հիշատակված է 650 թվականի դեպքերի առթիվ և այլն, որոնցից շատերը կործանվել են 1679 թ. երկրաշարժի ժամանակ և նրանից հետո վերակառուցվել։

2. Այնուամենայնիվ, մի քանի խիստ կարևոր հուշարձաններ էլ կանգուն վիճակում են մեզ հասել։

Այդպիսիք են.

ա. Կաթուղիկե եկեղեցին քաղաքի կենտրոնում, կառուցված XIII դարում։

բ. Նորքի փոքրիկ կամուրջը, կառուցված 1664 թվականին։

3. Քաղաքի ընդարձակման հետևանքով այսօրվա Երևանի սահմաններում են գտնվում.

ա. Ավանի տաճարը, կառուցված VI դարում։ Նրանով հիմք է դրվել հռիփսիմեատիպ տաճարներին։

բ. Ավանի մյուս երկու փոքրիկ եկեղեցիները, կառուցված X—XIII դարերում։

գ. Ավանի ս. Հովհաննես ավերակ եկեղեցու մահարձանը, կանգնեցված VI—VII դարերում։

դ. Ավանի գերեզմանոցի խաչքարերը (X—XIII դդ.) և աստիճանավոր գերեզմանական կոթողը՝ V—VII դարերի։

ե. Քանաքեռի շրջանակավոր խաչքարը, որ կանգնեցված է 1265 թվականին։

СРЕДНЕВЕКОВЫЕ ПАМЯТНИКИ ЕРЕВАНА

К. Г. КАФАДАРЯН
доктор ист. наук, профессор

Резюме

Город Ереван в прошлом имел большое число средневековых памятников культуры, но большая часть их была разрушена до основания во время сильного землетрясения 1679 года.

Уцелели только немногие памятники, доешдшие до наших дней. Таковыми являются: маленькая церковь — Катохике (XIII в.), обнаруженная в 1936 г., при разборке кафедрального собора, построенного после

33 Կարո Ղաֆադարյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը։ Երևան, 1945 թ.։

землетрясения 1679 года; храм в Аване, типа Рипсимэ, сохранившийся в полуразрушенном состоянии (VI в.); две часовни в Аване X—XIII вв.; две надгробные стелы V—VII вв. тоже в Аване; хачкар 1265 г. в центре Канакера с изяшным орнаментом; несколько хачкаров X—XVII вв. на кладбише Авана; мост в Норкском ущелье 1664 г., ныне охраняемый как памятник культуры.

На основании археологических исследований и письменных источников автор дает описание ряда средневековых памятников, некогда существовавших в городе Ереване. В их числе: базиличная церковь Погос-Петрос (V в.); неприступная крепость Еревана, упоминаемая историком VII в. Себеосом во время третьего нашествия арабов в 650 году; усыпальница ученого математика XI в. Оганеса Козерна, монастырь св. Анания (XVII в.) и другие памятники.